Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ ՍԱՀՄԱՆԻՆ ԴԻՄԱՎՈՐԵԼՈՒ ԵԿԱԾ ՀԱՅՈՐԴԻՆԵՐԻՆ

/10 հունիս, 2011 թ./

Ձերդ Սրբություն,

Սիրելի Սրբազան, Հոգեշնորհ Հայրեր,

Սիրելի դեսպաններ,

Բարեպաշտ հայորդիներ եւ բոլոր ներկաներ,

Ուրախություն է Մեզ համար, երբ Հայաստանի ու Վրաստանի սահմանին Համայն Վրաց Նորին Սրբություն Իլիա Բ Հայրապետի հետ ողջագուրումից հետո Մեզ ընդառաջ հանդիպում ենք Մեր ժողովրդի զավակներին, ովքեր եկել են դիմավորելու Հայոց Հայրապետին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից այսօր գոհության աղոթքով Մեզ ուղեկցող շքախմբի հետ ճանապարհվել ենք Թբիլիսի՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու գահակալ Իլիա Բ-ի Պատրիարք-Կաթողիկոսի հրավերով եղբայրական այցելություն կատարելու Վրաց Ուղղափառ Եկեղեցուն, նաեւ՝ Հովվապետական այցով լինելու Վիրահայոց թեմում, Մեր օրհնությունը բաշխելու սիրելի Մեր զավակներին, որպեսզի առավել զորանան հույսի ու հավատի, եկեղեցասիրության ու ազգանվիրումի մեջ:

Մեր Հովվապետական այցի ընթացքում հանդիպումներ ենք ունենալու Թբիլիսիի եւ Ջավախքի հայ համայնքների հետ: Հաղորդակից ենք լինելու Վիրահայոց թեմի հոգեւոր-ազգային կյանքին, այցելելու ենք եկեղեցիներ, հոգեւոր, կրթական, համայնքային հաստատություններ: Խնդակից ենք լինելու Մեր զավակներին իրենց ձեռքբերումների համար, ծառացած մարտահրավերների եւ խնդիրների քննարկումով հաղթահարման ուղիներ ենք փնտրելու վրաց մեր եղբայրների եւ իշխանությունների հետ:

Հայրապետիս սիրտը ջերմությամբ եւ հոգեւոր զվարթությամբ է համակվում, քանզի վիրահայ մեր ժողովրդի հետ հանդիպման այս առաջին հանգրվանին ձեր աչքերում տեսնում ենք որդիական սերը մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ, նախանձախնդրությունը՝ ազգային ձեր ինքնությանը, նաեւ՝ հույսն ու լավատեսությունը վաղվա օրվա, որի երաշխիքը վրաց եղբայրների հետ ձեր խաղաղ, սիրով ու համագործակցությամբ, ջանք ու արարումով լեցուն կյանքն է:

Ապրելով Հայաստանի եւ Վրաստանի անմիջական սահմանին՝ դուք յուրօրինակ կամուրջ եք երկու երկրների միջեւ, որպես հյուրընկալներ՝ առաջին ընդունողներն ու ողջունողները մեր երկրներ այցելողների: Այստեղ են առաջինը բացահայտվում հավատակից մեր երկու ժողովուրդների ունեցած նմանություններն ու ընդհանրությունները՝ արտահայտված կենցաղում եւ մարդկային պարզ փոխհարաբերություններում, որոնցով ձեր համեստ ներդրումն եք բերում տարածաշրջանի համար կարեւոր՝ վստահության ամրապնդմանը:

Ուրախ ենք ականատեսը լինելու, որ սահմանամերձ այս շրջանում հայերի եւ վրացիների հետ կողք կողքի ապրում եք՝ խաղաղ եւ համերաշխ, յուրաքանչյուրը հավատարիմ իր

հոգեւոր ու ազգային արժեքներին, հարգելով միմյանց իրավունքներն ու ավանդությունները: Նույն ոգով պիտի շարունակվեն բարեկամության ու միմյանց աջակցության ավանդները: Այսպիսի եղբայրական վերաբերմունքն ու կապերը կարող են լավագույն օրինակ հանդիսանալ մեր ժողովուրդների հարաբերությունների առավել զարգացման եւ զորացման, կայուն ու ներդաշնակ կյանքի կառուցման համար:

Թող ձեր սերը հանդեպ մեր Եկեղեցին եւ Միածնաէջ Սուրբ Աթոռը անվնաս լինի եւ զորացնի ձեզ հավատքով, որը լույս է առաջնորդության, զենք է պաշտպանության, կյանք է եւ փրկություն, որի հույսն ունենք ապավինությամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի: Նրա Սուրբ Ավետարանին հավատարմությամբ ապրեք ձեր կյանքը, Նրա պատգամներով կրթեք ձեր զավակներին,սնուցեք մեր պատմության հիշատակներով, մեր նախնյաց ժառանգությամբ ու ավանդներով՝ միշտ հաստատուն մնալով բարեկամության ու եղբայրության փիրավանդ արժեքներին:

Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահի մեր երկրները եւ օրհնի մեր ժողովուրդների կյանքը, ջանքերը եւ արդար ու բարի հույսերը:

Շնորք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. Ամէն: